Ապրիլ) երեկոյիս եկայ. Մղտեսին և Հաճիմարն Գշի (24 Ապրիլ) եկան։ Եւ օրս Առաջնորդն եկեալ ի մեր ժամս և երիցներուն վերայ ըստակ գրեաց թէ Զեկեղեցին կու չինեմ։ Եւ օրս ըստ բառի այլազգացն Սըտրելիազ ասի, որ է Սուրբ Գէորք։ Նարդ տվին գառի և ոչխարի Ժ ըստակ և Ը ըստակ. բայց յետոյ գլուխ չբռնեց նարդըս։

ԻԸ-իս օր Շաբաթ. ի փուռն մեր հսապ արին և եղև սէնէի գլուխ։ Եւ օրերքս լու եղև թէ Յոհանէն ի Պօղազն է եկեր։

Եւ Կիրակիս (29 Ապրիլ) Աշխարհամատրան. Թէքիրտաղցի Յովանէսն ի Մղսոնցն էր և մեք ի տեղն էաք։ Եւ օրս լու եղև թէ Ներսէս վարդապետն վաղչանեալ է՝ դեղակուր արարեալ մի իշխան զնա վասն եղբօրն իւր, որ էր և նա վարդապետ և ցանկայր առաջնորդութեան Տաթևու[1])։ Եւ օրս ի Պուրսա հոռոմ ոմն ուրացեալ զՔրիստոս և առեալ ընդ իւր Բ և Գ ընկեր և երթեալ ի տունն. և գայ ի միւս պահու եղբայր ուրացելոյն ի տուն և տեսանէ զնոսա և զեղբայրն իւր ուրացեալ և նստեալ անդ ի պատուի ընկերօքն. և ի բարկութիւն շարժեալ ասելով թէ Ուրացեալ ես զՔրիստոս Աստուածն ամենայնի և եկեալ ես ես ի տուն իմ հանդերձ շուն ընկերօքդ։ Եւ հանեալ զսուրն անդէն սրախողխող արարեալ սատակեցուցանէ։ Եւ իմացեալ անօրինացն յընկերացն զայս բան՝ ըմբռնեալ զնա տարեալ ի դատին և նոքա ողոքանօք և սպառնալեօք կամեցեալ դարձուցանել ի հաւատս իւրեանց. և նա քաջալերելով ասացեալ թէ Ոչ ուրանամ զՔրիստոս զի զուրացողն սպանի։ Եւ դատին տայ ի ձեռս դահճին զի գլխատիցէ. և նա տարեալ եհատ գլուխ նորին և կատարեցաւ ի Քրիստոս։

1) Տաթևու.